ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- օգոստոսի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի №96Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի օգոստոսի 3-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 1 տարի 8 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 29-ի №96Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Տիգրան Մեծ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0574 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0574 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 10 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի օգոստոսի 4-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի օգոստոսի 5-ի գրությամբ հայտնել է, որ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ հետագայում նման խախտումները բացառելու նպատակով,

ե) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ ԼԷ №0574 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման Ընկերության կողմից հայցվող 1 տարի 8 ամիս ժամկետով: Միաժամանակ, իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը, այն է՝ հայտը սահմանված ԼԷ №0574 լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից առնվազն 15 աշխատանքային օր առաջ ներկայացնելու փոխարեն ներկայացրել է 10 աշխատանքային օր առաջ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի 78-րդ կետը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը ՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 29-ի «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Տիգրան Մեծ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №96Ա որոշմամբ «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0574 լիցենզիայով ամրագրված «Տիգրան Մեծ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգել 1 տարի 8 ամիս ժամկետով՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի օգոստոսի 17-ը» բառերը փոխարինելով «մինչև 2023 թվականի ապրիլի 17-ը» բառերով, իսկ որոշման 1-ին կետում «11» թիվը՝ «29» թվով:
2. «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0574 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Տիգրան Մեծ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի նոյեմբերի 29-ի գրությամբ Հանձնաժողով ներկայացված

№O.AB.100.12CIB.PIED.0.10815.19 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 9 207 500 (ինը միլիոն երկու հարյուր յոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարից 4 603 750 (չորս միլիոն վեց հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 9 207 500 (ինը միլիոն երկու հարյուր յոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2023 թվականի հունիսի 1-ը գործողության ժամկետով:

3. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի օգոստոսի 17-ից, բացառությամբ որոշման 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2021թ.